

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության փորձագետ Արամ Ներսիսյանից

Ես՝ Արամ Ներսիսյանս, ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2019թ. հունվարի 10-ին կնքված N 1 պայմանագրի համաձայն:

Մինչև 2019թ. օգոստոսի 14-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Իրականացրել եմ քրեական գործերով իրավական օգնության և դատական հանձնարարությունների վերաբերյալ տվյալների գրանցման և կատարված աշխատանքների արդյունքների ամփոփում և վերլուծություն,
- Կատարել եմ օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության պայմանագրերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ուղարկված քրեական գործերով իրավական օգնության հարցումների և դատական հանձնարարությունների ուսումնասիրություն,
- Իրականացրել եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով դատական վարույթում գտնվող գործերով ՀՀ տարածքում հայտնաբերված օտարերկրյա իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձանց հանձնում (էքստրադիցիա)
- ըստ անհրաժեշտության իրականացրել եմ ուսումնասիրություններ, մշակել ուղեցույցեր, մասնակցել վարչության ուղեցույցերի մշակմանը, նախապատրաստել տեղեկատվական նյութեր, հայտարարություններ, գրություններ, առաջարկություններ, դիտողություններ և տրամադրել եզրակացություններ դրանց վերաբերյալ:
- Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Իրավական փոխօգնության
վարչության փորձագետ



Արամ Ներսիսյան